ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝

1. Աննա Շահնազարյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ
2. Անահիտ Սանթրոսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի վճիռների և որոշումների կատարման վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն, քաղաք Ստրասբուրգ, 2024 թվականի դեկտեմբերի 2-6-ն ընկած ժամանակահատված:

Գործուղման նպատակը

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Մարդու իրավունքների հարցերով թիվ 1514 նստաշրջանին մասնակցությունն էր և օրակարգում գտնվող մի շարք գործերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշման ներկայացումը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

1. Օրակարգում ընդգրկված առաջին հարցը վերաբերում էր *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* խումբ գործերին, որի շրջանակում Նախարարների կոմիտեն, դրական գնահատելով ՀՀ կողմից իրականացված մի շարք բարեփոխումներ, ավարտեց *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի, Գուլյանն ընդդեմ Հայաստանի*, ինչպես նաև *Ենգիբարյանը և Սիմոնյանն ընդդեմ Հայաստանի* գործերով վճիռների կատարողական-վերահսկողական վարույթները:
2. Օրակարգում որպես չզեկուցվող հարց ներառված էր Ադրբեջանի դեմ կայացված *Մուրադով խումբ* և *Միկայիլ Մամմադով խումբ* գործերը, որոնց վերաբերյալ հայկական պատվիրակությունը հանդես եկավ ելույթով՝ շեշտադրվելով այն, որ Ադրբեջանի կողմից այս վճիռների կատարմանն ուղղված որևէ միջոցառում չի իրականացվել:

3. Քննարկվել են *Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի*, ինչպես նաև *Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի* գործերը, որոնց շրջանակում Նախարարների կոմիտեն ողջունել է ՀՀ պատրաստակամությունը կատարելու վճռով նախատեսված պարտավորությունները:
4. Որպես զեկուցվող հարց քննարկվել է *Մակուչյանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի* գործը, որով Նախարարների կոմիտեն և անդամ պետությունները հանդես եկան կոշտ հայտարարություններով: Համաձայն ՆԿ ընդունված բանաձևի՝ եթե մինչև 2025 թվականի հունիս Ադրբեջանը չներկայացնի որևէ առաջընթաց, ՆԿ կընդունի միջանկյալ բանաձև, որը կենթադրի ավելի խիստ վերահսկողություն:
5. Քննարկվել է նաև *Օգանեզովան ընդդեմ Հայաստանի* գործով վճռի կատարման ընթացքը, որի շրջանակում ՆԿ մի շարք երկրների ներկայացուցիչներ ողջունել են «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագծի ընդունմանն, ինչպես ՀՀ կողմից ատելության խոսքի և ատելությամբ պայմանավորված հանցագործությունների դեմ պայքարին ուղղված քայլերը:

Ստորագրությունը, ամսաթիվը

10/12/2024թ.